

զանգուածը պիտի ստեղծեն նոր շրջաններու մէջ նոր յառաջադիմութեան, ինչպէս հինները եղան առաջին ջահակիրները, Մխիթարեան կենսատու շողերը սփռելու հայրենիքի մէջ երբ հոն դեռ կը տիրէր ըսպանող մթութիւնն:

Կը մաղթէ ամենուն մտային, ֆիզիքական քաջողութիւն, ուսմանց յառաջդիմութիւն և նպատակներու իրագործում:

Երբ ճառը կը վերջանար եռանդուն ծափերու մէջ, կը լուսէին մօտաւոր Ս. Անտոնի աշտարակէն խորհրդաւոր կէս գիշերին տաանուերկու դանդաղ հարուածները: Կը մեռնէր հին տարին և կ'անցնէր իր յաւիտենական լուսիւնն մէջ, կը ծնէր հաշտութեան, եղբայրութեան և Ազատութեան Նոր-Տարին:

Մ. ԽԱՊԵՅԻՍԻ
ԲԺՂԿ. ՈՒՍԱՄՈՂ

Մուրաւ-Ռաֆայէլեան վարժարանը՝ այս տարի ևս համալսարանական բարձրագոյն դասընթացներու կը յանձնէ ուրիշ վեց ուսանողներ ալ որոնք անցեալ Յուլիսի շրջանաւարտներն են:

Պետրոս Փելիպպոսեան-Իւրգիկացի-Բժշկութիւն:

Արիս Ղազարեան-Վիճնացի »

Մկրտիչ Մամիկեան-Տրապիզոնցի - Ճարտարարուեստ, գիտութիւն (Ingengneria)

Եղուարդ Գոնտազեան-Արսեցի »

Արամ Էմիրզէ-Իգմերցի »

Յովհաննէս Կիրեղեան Պօլսեցի »

Ամեն արժանազուած են Բոստանյի համալսարանին մէջ ուր արդէն սկսած են դաշնեթացը եռանդնալից և ջանասէր:

Այս փոքրիկ խմբակն ալ կուզայ ստուարացնել Հայ Ուսանողական Միութիւնը:

Յետոյ ենք որ կենացի զառն և կանխահաւ փորձառութեամբ սկսող այս ուսանողները գիտակից են իրենց պարտքերուն և պիտի համապատասխանեն մեծ սպասումներուն:

Կը մաղթենք իրենց երջանիկ ոկերքն և յաջող վերջ:



ԱՅԼ ԵՒ ԱՅԼ Ք



ՄԻ ՔԱՆԻ ՄԵԾ ԳՐՈՂՆԵՐՈՒ
ԱՇԽԱՏԵԼՈՒ ԵՂԱՆԱԿԸ

...~*~*~...

Հետաքրքրական է միշտ քաջ արուեստաւոր մը դիտել աշխատած ժամանակ, նա մանաւանդ երբ նա զբաղուած է անմահ գործի մը ստեղծման: «Երբ, ուր, ինչ տպաւորութեանց տակ ծնան զուգործողները, որ այնքան հիացումն կ'ազդեն յիս »: Ամեն մտացի ընթերցող, ինքնիրեն անշուշտ ստէպ այս հարցումն տուած է, և Գէորգ Գուկլան, Չէմբէրս օրագրի մէջ (պրակկ) գոհացումն կու տայ այսպիսի հետաքրքրութեան, խօսելով մի քանի Գաղղիացի և Անգլիացի բանաստեղծներու և վիպասաններու մասին, որոց մեծ մասն առատ նիւթ գանձեր են հրապուրիչ և մոգիչ խտալիայէն:

Բայրըն, Բըլլէր, Գոտիէ:

Բայրըն, ժամանակ մը կերակրուեցաւ չամիչով և սէլցի ջրով, միտքը դնելով, ինչպէս կ'երևի, որ այս կերպ պահեցողութիւնն, նպաստաւոր է գաղափարներու բողբոջման:

Բըլլէր, կէս գիշերի մօտերը կը զգար երեակայութեան տաքանալը, սկերով պատուած անկողնոյ մէջ:

Բայց աւելի ընտրող տիպար մ'է Թէոփիլոս Գոտիէ, վիպասանական ժամանակի ամենքից աւելի երեակայալից և ճարտար գրողներէն մին:

Նորա բարեկամն Մասիմո դիւ Կան կը պատմէ թէ ինչպէս նա զրեց իւր հարաւաւոր անուպանդորոսիւնն յիտալիա. «Պիտի ասեն որ այդ գիրքը գրուած է ամենալուրջ առանձնութեան մէջ, իրեն տրամադրելի հարուստ մատենաներով զբաղած մը մէջ, աչքի առաջն ունենալով քաղաքներու յատկագիծն և ամենանշանաւոր թանգարաններու ցանկերն անգամ: Ընդ հակառակն նա իւր ծնունդն առաւ տպա-

բանի մէջ, շարողներու խլացուցիչ աղմկի, մամուլներու և գործիցներու շաշեշառաչի, դռներու ճռնչոցներու, միով բանիւ գործարանի մը եռուզեռի մէջ, և առանց դիմելու յուշատետրի կամ գրքի կամ ո՛ր և իցէ փաստաթղթի, Գոտիէ հրէշաւոր յիշողութիւն մ'ունէր, և որոյ վրայ վստահ էր, առանց սխալելու երկիւղիչ կը շարադրէր առանց մի բան ջնջելու կամ ուղղելու, և տասը տող գրելուն պէս, ձեռագիրն կը յանձնէր գլխաւորին, որ ըստ իւր կարգին կու տար զբաշարի ձեռքը, և այսպէս հետզհետէ մինչև որ յօդուած մը կամ գլուխ մը աւարտէր: Երբ շարուած սիւնակներն իրենց ցոյց կու տային, Գոտիէ հղունգով ախալները կը գծէր, ու դարձեալ կը շարունակէր գրել, ծանր շունչ քաշելով, ինչպէս ական փորող գործաւոր մը՝ որ օր մը ամբողջ աշխատելէն յետոյ դուրս կ'ելլէ. սկսած 1850էն զկնի (Գոտիէ 39 տարեկան էր այն ատեն) իւր գործերն գրեթէ բոլորն այս կերպով գրուած են »:

ՇԵՒՆԵՐ.

Հարկ չկայ ներողութիւն խնդրել զՇԵՒՆԵՐ դասելու մեր բանաստեղծներու կարգը, վասն զի եթէ իւր ազգայիններն յիշէին անոր վարդապետածներն՝ սանձած կը լինէին իրենց այլասերած ձգտումներն և կ'ազատէին բարոյական խորանդունդ անկմանէն: Այն մեծ համբաւն զոր վայելեց ժամանակ մը ՇԵՒՆԵՐ, վերջին տարիներս երթալով նսեմացաւ Գերմանիոյ մէջ, ուր սովորութիւնն արած էին կոշեւու զնա հեգնաբար՝ կանանց՝ և երեխաներու շանաւսեղծը: Ուստի ոչինչ չկայ զարմանալու, թէ նա չկարողացաւ բանեցնել իւր ազդեցութիւնն համընթացաբար Տրայտշէի և աշակերտաց նորա Բարոյական լրջութիւնն և ազնիւ զգացումները ամենագուէն էին ՇԵՒՆԵՐի մէջ, և այդ ձիրքերու առատազեղութիւնն և ոչ թէ անոնց չքոտութիւնն եղաւ իւր թուլութեան պատճառն: Իւր աշխատելու կերպն ճիշդ կ'արտայայտէ, և մարդու մեղքնալը կուգայ կարգա-

լով թէ ինչ միջոցներու կը դիմէր արժեքնեղութիւն համար իւր մուսայն: Զոր օրինակ, տնագատեղի եղած էր վայմարի մէջ, անոր թօշնած խնժորի քամածն խմելով, շրջաւոր շարժելու համար: Մի ուրիշ գորոյցի մէջ նկարագրուած է իւր աշխատութիւն գրասեղանի առջև նստած, և ոտքերը պաղ ջրով լի տաշտի մէջ դրած, և տաք երեսարբիչ մը ճակատին, արիւնն գլուխը քաշելու համար: Ասոնք կրնան նաև պարզ փորձեր եղած լինել, բայց պիտի տեսնանք յիւրախ անոնց գործադրութիւնը, որ ժամանակ կը գրէր Վայլենստայի ինքնապատումն:

« Երբ գրասեղանի առջև կը նստէր երեկոյան, մի սկահակ թունդ սուրճ կը խմէր, կամ աւելի շատ մօտին կը պահէր Հոնեսի հին գինւոյ շիշ մը կամ շամբայնը, կազդուրուելու համար: Յաճախ իւր դրացիներն կը լսէին գիշերուան լուռութեան մէջ անոր առողջանութիւնն, և որոնք հնարաւորութիւն կ'ունենային գինը տեսնելու — դիւրին բան իւր տան հանդիպակաց բարձր շէնքի մը կտուրի վրայէն — կը նշմարէին բարձր ձայնով խօսելը վեր վար քայլելով, մէկ ալ յանկարծ ցատքելը, գրասեղանի առջև նստելն ու գրելը, և ատեն ատեն առջև դրուած գաւաթէն ումպ մ'առնելը: Զմոռայ եղանակին մինչև առաւօտեան 4 կամ 5 ժամին գրասեղանի առջև կը մնար նստած, իսկ ամառն մինչև 3 յետոյ անկողին կ'երթար, և վեր կ'ելլէր 9 կամ 10-ին: Կազմուածքը թույլ լինելով, բնական է որ այն կենաց ոճը, իրենց առողջութիւնը կը կազմալուծէր. առանց թեկնա կեանքը կարճելու վտանգին ենթարկուելու: Ի վայմար, ուր մեռաւ, շատ անգամ տեսած էին շրջագայելու ելած, յուշատետրիկ մը ձեռքին, դըսական մեծ պալատի ծառերու մէջ: Չղացնումներու ենթակայ էր և խոյս կու տար մէկու մը հանդիպելէ. առանձին իմէ կերպով շատ սիրէր ժայռերու միջին սողոսկող նրբուղի մը, ուր կը հանէին հոսող վտակի մը մրմունջները, և հոն կ'ընկղմէր իւր մտածութեանց մէջ, կանաչ տերեւոց հովանիին ներքև: